№ 33 Փետրվարի 24 (Մարտի 8) 1881 Փետրվարի 24 (Մարտի 8) № 33

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Ոտարազգացիք գիտում են ուղղակի
*Тифлисъ. Редакція «Мшакъ»*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Հայտարարութիւնների համար վճարում են
իրաւասնիք բառին 2 կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Կաղզուանից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիա։ Քաղաքական տեսութիւն։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Անի։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԿԱՂԶՈՒԱՆԻՑ

12-ն յունվարի

Ժամանակաւորապէս բնակվելով Կաղզուանի մէջ (որը գտանվում է Կարսայ Նահանգում) և կարդալով պատուական լրագրիդ մէջ, որ Վանայ եղբայրների և քոյրերի քաղցը և ծարաւը դեռ չարունակվում է, բազդ ունեցայ ժողովելու Կաղզուանի օտարականներից և բնիկներից յօգուտ Վանայ սովելոց երկու հարիւր երեսուն բուբլի և քսան կոպէկ (230 ր. 20 կ.), որից խնդրանօք պ. պ. Նուիրատուների 80 ր. 20 կ. նուիրեցինք տեղիս Նորակառոյց խղճալի հայ ուսումնարանին, իսկ 150 բուբլին, խնդրեմ փոխանակագրովս տանաք Թիֆլիսի 2-դ կարգի վաճառական պ. Մնացական Սարգսեանից, և ուղարկէք ուր որ հարկն է։

Ընդամին ուղարկեցի և ստորագրողների ցուցակը և խնդրեմ ի խրախոյս տեղիս մի քանի բնիկների և ստորագրողների, տպագրէք ձեր պատուական լրագրի մէջ։ Ստորագրութիւնը չարունակվում է և յոյս ունեմ որ շուտ ժամանակի մէջ գումարը հասցնեմ 350—400 բուբլի։

Խաչատուր Բալասանեանց 10 ր., Մահտեսի Բուդաղ Դժանփոլադեանց 10 ր., Մարգար Խալաթով (ալէքսանդրապօլցի) 10 ր., Լևան Եֆրեմով 10 ր., Զուրաբ Կոստանով (ալէքսանդրապօլցի) 10 ր., Գասպար աղայ Ղազարով մէջլիս Կաղզմանու 5 ր., Թորոս Ղզա Ղազարով զէբուղաթ Կաղզմանու 5 ր., Եսայի Դժանփոլադեանց 5 ր., Արշակ Բիշարեանց 5 ր., Սահակ Յարութիւնեանց 5 ր., Կոստան Մատղաշեանց 5 ր., Բաբայ Գէորգով 5 ր., Մելիք աղա Տէր-Օհաննէսով 5 ր., Կարապետ Օհանէսով 5 ր., Եօվանէ Բարանասեանց (Ղարսայ թերել) 5 ր., Գալուստ Փալանդժանեանց (ախալքալաքցի) 5 ։ Հէյդար Աղա Խալիր-օղլի (տաճիկ) 5 ր., Պետրոս Բրմոյեանց 4 ր., Համբարձում Յարութիւնեան Բալասանեանց 3 ր., Յովհաննէս Աշեփով 3 ր., Մի ոմն 3 ր., Աւետիք Դժանփոլադեանց 3 ր., Վահան Յարութիւնեանց (կողպեցի) 3 ր., Տիգրան Պետրոսով 3 ր., Սահակ Կոնդաղչեանց 3 ր., №№ 3 ր., Մ. Յարութիւնեանց (կողպեցի մաքսատան ծառայող) 3 ր., Իլիա Տէր-Օհաննէսով 3 ր., Խաչատուր Ահարոնեանց (կարսեցի) 3 ր., Մայոր Кавалеріи Рашидъ-бекъ (куртинъ) 5 р., Տանուտէր Կաղզմանու Խաչատուր Աղա Սարգսեանց 3 ր., Губернскій Секретарь Храпачъ 2 р., Տեփան Կարոյեվ մէջլիս Կաղզմանու 2 ր., Թարզի մգոյ Սահրաթով 2 ր., չէ վճարել 2 ր., Մկրտիչ Գէորգով 2 ր., Համբարձում Ոսկանով 2 ր., Константинъ Вардосанидзе (վրացի) 2 р., Պարոն Թաթոսով (մէջլիս Կաղզմանու) 2 ր., Կողպեցի Ակոբ Աւետիսեանց 2 ր., Դէմիան Բեղնիակով (յոյն) 2 ր., Մահտեսի Պետրոս Քանդարեանց 2 ր., Խաչիկ Մահտեսի Յակոբով 2 ր., Արսէն Կոստանեանց 2 ր., Յովսէփ Դանելով 2 ր., Զաքար Հայրապետեանց 2 ր., Աղէքսանդր Մատղաշեանց 2 ր., Աղանիկ Նահապետեանց 2 ր., Наврузъ Ага Кенгерлинскій (нахичеванскій) 2 р., №№ 2 ր., Սիմէոն Բարատաշեանց 2 ր., Տիկին Զանազան Բալասանեանց 2 ր., Տիկին Մարիամ և որդի Նորա Յովհաննէս Բալասանեան 2 ր., Տիկին Մագդաղինէ Բալասանեան 2 ր., Որդի Նորա մի տարեկան Աղէքսանդր 1 ր., Հեռագրատան ծառայող Գրիգորիոս Յակոբեանց (հինգնախիջևանցի 1 ր., Տէր-Յովհաննէս քահանայ Թովմասեանց 1 ր., Միլիտոն Պահլաւունի 1 ր., Յարութիւն Գէորքով (ժամագործ) 1 ր., Յարութիւն Աղաջանով 1 ր., Արտեմ Մելքոնով 1 ր., Յարութիւն Բայեաթով 1 ր., Բաբա Մախսուդով 1 ր., Սարգիս Ակորով 1 ր., Յարութիւն Պողոսով 1 ր., Մելքոն Մեսրոպեանց 1 ր., Օսկան Առաքելով 1 ր., Մատեոս Աւետիս Առաքելով Արութիւնով 1 ր., Մինաս Խաչոով 1 ր., Տիկին Վառինկայ Բարտաշեան 1 ր., Յարութիւն Կարապետով 1 ր., Միխակ Մայսուրով 1 ր., Աղէքսանդր Մարոեանց 1 ր., Տիկին Սալվինազ Նահապետեան 1 ր., Կարապետ Յովսէփեանց 1 ր., Хорунжій Мачневъ 1 р., Ефимій Берзена-швили (իմերել) 1 р., Георгій Назадзе 1 р., Лиза Зайфъ (еврейка) 1 р., Անաստասիա Լազրէվ (յոյն) 1 ր., Василій Воронинъ 1 р., Դանիէլ Միխայիլով (յոյն) 1 ր., Իվան Լէվկոպոլ (յոյն) 80 կ., Նասիբ Գորոյեանց 50 կ., Бентиктовичъ (պալեակ) 50 կ., Առաքել Խաչոով 50 կ., Յովսէփ Գրիգորով 20 կ., Եագոր Պապով 20 կ., Տէր-Մկրտչեանց 50 կ.։

Գումարն է 230 ր. 20 կ.։

Սիմէոն Պառաւեանց

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, փետրվարի 13

Բէլախեանի և Օրբելեանի ուսումնարանի մասին լուրը կարդալով, անկարելի է, որ մարդ տխուր և ցաւալի տպաւորութիւններ չը ստանայ. ակամայ մտաբերում ենք, որ հայ ուսումնարաններից չատերի մէջ էլ նմանապիսի անցքեր պատահում են այլ և այլ գոյներով։ Որպէս զի այդպիսի կեղտոտութիւններից և հակամարդկային դաստիարակութիւններից աղատվեն և զերծ մնան մեր ուսումնարանները (թէ մանաւոր, թէ ազգային, այդ մի և նոյն է, քանի որ երկուսի մէջ էլ հայ մանուկն է դաստիարակվում), մենք առաջարկում ենք, այլ և պահանջում ենք, որ աւելի մօտիկ անձինք երեսն հանեն դրանց մէջ գործվող եղելութիւնները, որով ամեն ծնող հասկանալով հեշտ բանի զօրութիւնը, ինքը թերեւս մի հոգատարութիւն անէ այդ մասին։ Խեղճ մանուկներ, գոնէ կարողանայիք իմաց տալ ձեր զբրութիւնը ձեր ծնողներին։ Մենք ականատես եղանք յիշեալ ուսումնարանի տէր Օրբելեանին «Մշակ» կարդալիս, որից յետոյ այս առածը արտասանեց «չունը կը հաչի, քարվանը կը քոչի»—ինչպէս է հասկանում լրագրութեան ձայնը և որպիսի ներգործութիւն ստանում մանկավարժ պարոնը, ահա ապացոյց։—Ինչպէս մենք գիտենք Աղէքսանդր Արարատեանցը՝ «Գնարիկ Մանկականի» հեղինակը այդ ուսումնարանում ուսուցչութիւն է անում. մենք պահանջում ենք, որ նա այս մասին բացատրութիւն տայ հայ հասարակութեանը—նրան անտարակոյս բոլոր մանրամասնութիւնները յայտնի կը լինեն. եթէ պարոն Արարատեանցը լռեց, մենք ուրիշ տեսակ բացատրութիւն կը տանք այդ լռութեանը։ Մի քանի ժամանակ սրանից առաջ լուր տարածվեց, թէ մի բրօշիւր է հրատարակվում այդ ուսումնարանի վերաբերութեամբ. ինչու, արդեօք, մինչև օրս չէ երեւում այդ գիրքը. նրա հեղինակից էլ խնդրում ենք, որ որքան կարելի է չտապեցնէ տպագրութիւնը, կամ թէ մոռացութեան է տուել, նորից մտաբերէ։ Հայ մանուկների կանոնաւոր դաստիարակութիւնը, նրանց պատիւը ամենքիս համար չատ, չատ և չատ թանգ արժէ պարոններ։

Հայ մարդ

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հեռագրում են ԵՐԵՒԱՆԻՑ որ փետրվարի 21-ին այդտեղի հայ թատրոնասէրները չատ աջողակ կերպով ներկայացրին «Սէր և նախապաշարմունք» պիէսան։ Օրիորդ Փարանձեմ Մելեանց գեղեցիկ կերպով խաղաց և ստացաւ մի ծաղկեայ պսակ ժապավէններով զարդարված։ Դահլիճը լի էր։ Ներկայացման նպատակը բարեգործական էր։

Ուրբաթ գիշեր, փետրվարի 20-ին ռուս տա-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## Ա Ն Ի

(1876)

Գլուխ, անուակդ իմ, գլուխ։

Արեգակը չեչտում էր. ձիանը տրոփում էին մերթ ալիւրանման մանր և կրակոտ հողի մերթ սեղ խոտով զուարճացեալ ու զովացեալ դաշտի և մեղմիկ եւևէջ ունեցող դարևանդների ազատանոք ուղիների վրա։ Կառապանը—մեր առաջնորդը—մեզ Անի էր տանում։

Անի։

Մեծ պատերազմը դեռ չէր եղած, ուր աւերակների որբը՝ իւր նախնեաց աճիւններէն յառնելով մի անգամ դարձեալ յայտնեց թէ ինչ հանճար և զօրութիւն կայ այն փլատակների ծոցում ծածկված։ Հայն անարգված էր։ Իւր պապերի ամայացեալ և քայքայեալ տաճարների և ամենայն չուքէ մերկ ու կողոպուտ մատուռների մէջ անգամ երթալ մամ վառելը դժուարացած էր նրան։ Ախորժելի չէր բռի մէջն իշխանութիւն ունեցող նախանձոտին որ՝ նա իր հարց գերեզմանների վրա չոգելով մի կաթիլ զգացման արտասունք հոսելու մխիթարութիւնն ու քաջալերը գոնէ ունենայ։

Մենք մեր թղթեակն առանք վարպետ և փաղաքուշ խնդրանքով. թոյլատրութիւն եղաւ մեզ անցնիլ ջուրը, որ եզերում էր երկու ակրութեանց սահմանը։ Թողնելով փոչեթաղ Ալէքսանդրապօլն ետևներս, մեր կառքը գլորվում էր Ախուրեանի և Կարս-ջրի մէջ դրկված հայաւէտ դաշտերի միջով, երբեմն միայն թեթև եզեզ անելով և աստ անդ իւր անիւների փոչին փոքր ջրերի մէջ սրբելով։

Բաւական ճանապարհ դէպի հարաւ արևմուտեան անկիւնը կտրելէ վերջը, դէմքերս այնպէս դարձուցինք որ ձախի վրա ալեոր Արագածն ունէինք, դէմ երեւներիս կողքայ աղուտ սարերը, վեհափառ Մասիսը հարաւ արևելեան խորշում անհուն հեռաւորութեան մէջ դիզացած, և դարձեալ դէմ երեւներիս՝ փոքր ինչ դէպի արևմուտք չեղ և մօտաւոր հորիզոնում՝ Ալաձեայ։

Այդ երկրային տիտաններին յանդիման, իւր տան և երկու դարն ուսերին նստած է Անին իւր մոխիրների վրա։ Երբ աչքն առաջին անգամ մեծ ասպարէզների հեռաւորութեամբ, տեսնում է նրան, ուղեղի մէջ ընդոստ զարթնում է միտքը իբր թէ չէն լինի անչինացեալը, և կենդանի՝ դիակնացեալը։

Դեռ գլուխ, անուակդ իմ։

Եւ գնում ենք, և գնում ենք. ոչ մի բառ, ոչ մի չչունչ։ Անապատն առջեզ է. մեռելութիւն օդի մէջ, տերիզ տակ գերեզմանք։ Ի զուր մեղեդիներ են մրմնջել և աղօթք ասել մարդիկ այն տաճարների և մատուռների մէջ, որ ճանապարհիդ վրա այս և այն կողմ ցցուած ես տեսնում, որոնց կիսաքանդ կատարների վրա ագռաւն է նստած խռպոտաձայն, և փլփլիկ կաթողիկէների խորշերում արևէն խոյս տուող բուն՝ մահուան գուժկան։ Մի ամբողջ աշխարհ, թառգում ճոխութեամբ՝ գեղեցկութեամբ պանծացող, կորած է հողի տակ։ Մի այլ կատր բրդուած աչխարհ, աղքատիկ, գձուած, անարգուած, արհամարհուած, առնը՝ ազորմուկ խրճիթ, աղօթատունը՝ մարագ, կեանքի ոչ թէ կենդանութիւնը այլ թալկութիւնն է գրատկերացնում աչքիդ առջև. ծիրում է ոտքիդ տակ։ Ե՛ւ առաջինի և՛ երկրորդի վրա սահմանապահ պահանորդի ձիու սմբակն է կոխում, և մի և նոյն խարազանի ձագին է լսվում մէկի մարմնի և միւսի յիշատակի վրա։ Այդ մոքերն և այլ բազում մոքեր, որ ամեն կողմ վեր են վազում գլխուդ մէջ այդ ահագին գերեզմանաց լռութեան ծոցում, խորասուզում են քեզ մտածութեանց մէջ, և հուսկ մի տեսակ թմրութիւն առնում է քեզ բոլոր՝ երբ ուղեղդ, խոնջ, էլ չի կարող մոքերի մէջ հարկաւոր կապը պահպանել և նրանք մի անդոյն ու անորոշ խառնուրդ են դառնում, ապա մթանում, ապա անհետանում։

Երբ սթափեցանք, Անին ահագին հասակ և ընդարձակութիւն էր առել։ Հեռուէն, արևի լուսացնցուղ փոչու մէջ, այդ նրբանիւթ քաղի տակ, նա մեզ մի չէն քաղաք էր երևում իւր պատերովը, տաճարներովը, իւր գմբէթներովը, սիւներովը, կամարներովը. մօտիկէն, ինչ էր երևում նա մեզ՝ Աստուած իմ. մի անհուն աւեր, մի անեղ ուրուական՝ ճոխ գրգռեակներով ծածկուած. մի հակայատիպ գիւցազն, որ կռուել է բուռն հեղեղի նման այլաւոր, բազմող ու անցնող գնացող ազգերի դէմ, ժամանակի ճիրանների ու ժանիքների դէմ, համայն դժոխքի—դուժ ոխերի—դէմ, և երբ կենդանութիւնը խլել են իրենից՝ նա դարձեալ կանգուն է մնացել, բայց բոլորովին որպէս ուրուական, իշխանական մենկնոցը ուսերի վրա ծուէն ծուէն պատառուած, հզօրակուռ ղրահները հերձուած ու խարխալված, աղիքները թափված ու լանջը դատարկ, սաղաւարտը ջընջվրուած ու ակնակապիճը մութ խառնշներ. և այդ վիթխարի մարմինը այդպէս խարխալված և անպատված, և այդ խարխամունքի և այդ անպատութեան մէջ էլ ահեղաստաստ ու ահեղաշուք, երկնից աստղերի դէմ արձանացած է՝ իբրև բզոքարկու ընդդէմ նոցա խստութեան, և ազգերի առջև՝ իբրև նոցա բարբարոսութեանն ու անիրաւութեան յանդիմանիչ։

Եւ ինչ է այն մխիթարութիւն կամ յոյսը որ բերում են այդ աւերակաց Ոգուն իւր որբիկ որդիքը։

Երբ հիւսիսի դէմ, բարձր ի ճակատ, երկայնանիստ սարի պէս վիմացած, յաւերժագեղ, բայց տիրաղիմակ պարիսպների երկրորդ դռան առջև կանգնանք, որից մտնելու էինք «ցաւոց քաղաքը», մութը պատեց աչքերս. մի քանի ակընթարթ և ապա ձեռքս սահեցուցի նոցա վրայով։ Ընկերս քիթը սրբել ձեռացուց։ Այդ էր տուրքը, որ հատուցանելու էինք, և մտանք։

Մեծարուեստ պարիսպներիդ մէջ ժողովուած նստած, լալիս էիր դու ով քաղաք, մենջիկ լացով։ Միայն տերիզ տակ, չատ ներքև, հեծում էր Ախուրեանդ, ժայռերի դէմ կոծուելով ու ակուելով, ու քո լռութեանդ մորմոքին մէջ նորա տխուր հեծութիւնն էր միայն լսելի լինում անդունդի վրա կախ նայողին։ Ընդարձակ ու լայնատարած անկողնդ մխրով ու գերբուկներով էր լի. բայց և այն սակաւն, որ մնում էր քո ունեցածէդ, չատ իսկ ասում էր կորուսածիդ որքան մեծագին եղած լինելը։ Ցաճարներդ, մատուռներդ, պալատներդ, կամարներդ, սիւներդ, աշտարակներդ, իրենց հոյակապութեամբ, իրենց գեղազարդ քանդակներով, իրանց ճոխաստաճոյճ դրուագներով, արեգակնակներով, իրենց վեհամաշուք պերճութեամբ, երկնաբերձ բարձրութեամբ, իրենց հաստատուր ու գեղաչէն կերտուածով, կորուսածներուդ ստուերը, կմախքն